ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2023թ. **N_____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 3–րդ հոդվածի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի 9-րդ և 12-րդ մասերի, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 20.1 կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշումը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Թևոսյան փողոց հ.1 և հ.1 շենքի հ.1 հասցեներում գտնվող 0.938485 հա մակերեսով /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.07072017-01-0131 և հ.07072017-01-0129 վկայականներ/, Թևոսյան փողոց հ.1/4 հասցեում գտնվող 0.301587հա մակերեսով /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.07072017-01-0125 վկայական/ «Կաշվե Գալանտերեայի Ֆաբրիկա» ԲԲ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող և Թևոսյան փողոց հ.1/2 հասցեում գտնվող «Կաէռ Քնսթրաքշն» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 0.886428հա մակերեսով /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.21022023-01-0141 վկայական/ հողամասերի նպատակային նշանակությունները «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության» հողերի կատեգորիայից փոփոխել «բնակավայրերի» հողերի կատեգորիայի:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով առաջարկվում է «Կաշվե Գալանտերեայի Ֆաբրիկա» ԲԲ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Թևոսյան փողոց հ.1 և հ.1 շենքի հ.1 հասցեներում գտնվող 0.938485հա մակերեսով /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.07072017-01-0131 և հ.07072017-01-0129 վկայականներ/, Թևոսյան փողոց հ.1/4 հասցեում գտնվող 0.301587հա մակերեսով /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.07072017-01-0125 վկայական/ և «Կաէռ Քնսթրաքշն» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Թևոսյան փողոց հ.1/2 հասցեում գտնվող 0.886428հա մակերեսով /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.21022023-01-0141 վկայական/ հողամասերի նպատակային նշանակությունները «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության» հողերի կատեգորիայից փոփոխել «բնակավայրերի» հողերի կատեգորիայի:

ՀՀ կառավարության 15.12.2005թ. հ.2330-Ն որոշումով հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծում ամրագրված պայմանական նշաններով քննարկման ներկայացված հողամասերը ներառված են արդյունաբերական օբյեկտների գոտու հողերի կազմում:

Քննարկվող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.07072017-01-0131, հ.07072017-01-0129, հ.07072017-01-0125 և հ.21022023-01-0141 վկայականներում հողամասերի նպատակային նշանակությունները ամրագրված են արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական, իսկ գործառնական նշանակությունը՝ արդյունաբերության օբյեկտների:

Թևոսյան փողոց հ.1, հ.1 շենքի հ.1, հ.1/4 և հ.1/2 հասցեներում գտնվող համապատասխանաբար 0.938485հա, 0.301587հա և 0.886428հա մակերեսներով հողամասերում գործող օրենսդրության շրջանակներում Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացվող պահանջներին և պայմաններին համապատասխան տրամադրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա նախատեսվում է իրականացնել բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակելի նշանակության օբյեկտները նախատեսված են բնակավայրերի նպատակային նշանակության հողերի կազմում, անհրաժեշտություն է առաջացել քննարկվող հողամասերի նպատակային նշանակությունները սահմանել «բնակավայրերի»:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ մասերի՝ համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը և դրանց նախագծման առաջադրանքները համայնքի ղեկավարի ներկայացմամբ քննարկվում են միջգերատեսչական հանձնաժողովի նիստում և հաստատվում են համայնքի ավագանու կողմից՝ միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա:

Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը հավանության է արժանացել ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի հ.1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ